

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՈՒՎՈՐ ԿԱՐԵՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱԿՈՔ ԿԱՐԱՊԵՆՑԻ ՓՈՔՐ ԱՐՁԱԿԸ

(ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Ժ.01.02 - « Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ -2021

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Սուրեն Սերյոժայի Աբրահամյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Վլադիմիր Աղասու Կիրակոսյան

բանասիրական գիտությունների
թեկնածու
Լիլիթ Ժորայի Ղազարյան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի Խաչատուր Աբովյանի
անվան պետական մանկավարժական
համալսարան:

Պաշտպանությունը կայանալու է 2021 թ. մայիսի 7-ին, ժամը 12:30-ին ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թվականի մարտի 25-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ բանասիրական
գիտությունների թեկնածու



Ս. Ա. Մարգարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է 20-րդ դարի երկրորդ կեսի ամերիկահայ լավագույն գրողներից Հակոբ Կարապենցի փոքր արձակին, մասնավորապես նրա պատմվածքներին:

Ներածության մեջ հակիրճ ներկայացված են գրողի պատմվածաշարերը, դրանց վերաբերյալ գրականագիտական անդրադարձների համառոտ պատմությունը, ուրվաձգված է արձակագրի կրած ազդեցությունների շրջանակը, հիմնավորված է ուսումնասիրության կառուցվածքն ու գլուխների հաջորդականության տրամաբանությունը:

Ատենախոսության երեք գլխից յուրաքանչյուրում վերլուծված են Հ. Կարապենցի առանձին պատմվածաշարերը: Առաջին և երկրորդ գլուխները նվիրված են հեղինակի՝ տարագրության թեմայով գրված պատմվածաշարերի, երրորդ գլուխը՝ համաշխարհային քաղաքակրթական իրողությունները և ամերիկյան իրականությունը պատկերող պատմվածաշարերի վերլուծությանը:

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՌԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան Հակոբ Կարապենցի պատմվածքներն են, նպատակը՝ հեղինակի փոքր արձակի՝ հայ և համաշխարհային գրական առնչությունների և ազդեցությունների վերհանումն ու այդ առնչությունների քննությամբ գրողի փոքր արձակի իմաստովորումն ու արժևորումը, ինչը ենթադրում է արձակագրի պատմվածաշարերի աշխարհայացքային, թեմատիկ, պատկերային, կերպարային ու դիպաշարային շերտերի քննություն:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՌԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կարապենցի պատմվածքների քննությունն արդիական է հատկապես ժամանակակից քաղաքրթական իրողությունների գեղարվեստական անդրադարձի և այդ իրողությունների՝ առանձին մարդկային ճակատագրերում բեկման, հոգեբանական վերապրման ու գոյաբանական յուրօրինակ իմաստավորումների տեսանկյունից: Այն կարող է կիրառվել սփյուռքահայ գրականությանը, ամերիկահայ արձակին, սփյուռքահայ գրականության մեջ էկզիստենցիալիզմի դրսևորումներին, հայ և համաշխարհային գրականության առնչություններին նվիրված դասընթացներում, հոգվածներում և ուսումնասիրություններում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՄԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴՈՒԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Աշխատանքում կիրառված է վերլուծության համեմատական գիտամեթոդը, ինչի շնորհիվ գրողի ստեղծագործության մեջ շատ ավելի խորքային շերտեր է հնարավոր վերհանել: Ուստի մեր առջև խնդիր է դրված եղել նաև Կարապենցի «փոքր արձակը» դիտարկել ոչ թե որպես ինքնաբավ, ինչը մեր կարծիքով նրա մասին գրված հոդվածների մեծամասնության հիմնական ուղղությունն է, այլ լայնահամատեքստ մի իրողություն՝ համեմատական քննության մեջ չսահմանափակվելով միայն հայ, սփյուռքահայ կամ ամերիկահայ գրական համապատկերով:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության մեջ կիրառվել են Կարապենցի պատմվածաշարերը վերլուծող առավել արժեքավոր ուսումնասիրությունները, հատկապես գրողի՝ հայ և համաշխարհային գրականության հետ ունեցած աղերսներին անդրադարձա՝ Նուպար Ակիշյանի, Գ Անահիտ Արամունի-Քեշիշյանի, Թորոս Թորանյանի, Գրիգոր Հակոբյանի, Հրանտ Թամրազյանի, Ստեփան Թոփչյանի, Ռուզան Արիստակեսյանի, Աբգար Ափիսյանի գրախոսությունները, ուսումնասիրություններն ու հոդվածները:

Իրենց հոդվածներում գրականագետներից շատերն են անդրադարձել Կարապենցի կրած գրական ազդեցությունների ու աղերսների խնդրին, թեև խորքային ու ամփոփ քննությունը հայ, ամերիկյան, հատկապես էկզիստենցիալիզմի և համաշխարհային գրականության այն հեղինակների հետ (Դոստոևսկի, Կաֆկա, Բեկետ, Կամյու, Սարտր, Մարկես, Հեմինգուեյ, Քարվեր և այլն), որոնցից կրածազդեցությունները գրողին քննել հուշել (հիրավի «Կարապենցն ինքն իր գրականության ամենամեծը մեկնաբանն ու քննադատն է»¹) մինչ մեր ուսումնասիրությունը բացակայում էր, և Կարապենցի փոքր արձակի քննությունը հենց այս տեսանկյունից էլ կազմում է մեր աշխատանքի գիտական նորույթը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի Սփյուռքահայ գրականության ուսումնասիրման բաժնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են գիտական ժողովածուներում հրապարակված հոդվածներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության կառուցվածքը ժամանակագրական է և թեմատիկ:

Յուրաքանչյուր գլխում հեղինակի առանձին պատմվածաշար է քննվում, որոնք հաջորդում են միմյանց ժամանակագրական կարգով: Անցած դարի 70-ականներին Կարապենցին՝ որպես պատմվածագիր, հետաքրքրել է տարագրության և անհատի օտարման թեման, 80-ականներին՝ բացառապես ամերիկյան իրականությունն ու այդ միջավայրում ընդգծված արտահայտված մարդկության քաղաքակրթական ճգնաժամի խնդիրները: Այսպիսով, ատենախոսության՝ ժամանակագրորեն իրար հաջորդող և տարագրության թեմային նվիրված «Անձանոթ հոգիներ» (1970) ու «Նոր աշխարհի հին սերմնացանները» (1975) շարքերը վերլուծող առաջին երկու «Տարագրության թեման և գոյապաշտական մոտիվները Կարապենցի պատմվածքներում» և «Տարագրության գեղարվեստական տարբերությունը» գլուխները թեմատիկայի իմաստով տրամաբանական մեկ ամբողջություն են կազմում, իսկ միջավայրային մեկ ամբողջություն ու թեմատիկ ընդհանրություններ ունեցող «Միջնարար» (1981) և «Ամերիկյան շուրջպար» (1986) շարքերը քննում է երրորդ՝ «Քաղաքրթական ճգնաժամի պատկերը Կարապենցի պատմվածքներում» գլուխը:

¹ Արամունի-Քեշիշյան Ա., Կարապենցի տեսական ըմբռնումների համակարգը, «Գարուն» ամս., 1998, թիվ 10, էջ 74:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության ներածության մեջ Հակոբ Կարապենցին ներկայացրել ենք որպես պատմվածագիր՝ որոշարկել նրա պատմվածաշարերի թեմատիկ ընդգրկումների շրջանակները, համառոտակի ներկայացրել և հիմնավորել ենք աշխատանքի կառուցվածքն ու վերլուծության մեթոդաբանությունը, ձևակերպել գիտական նորոյթը, ամփոփել գրականագիտական անդրադարձների պատմությունը, ընդհանուր տեսական անդրադարձ կատարել գրական ազդեցության խնդրին՝ որոշարկելով գրողի աշխարհայացքի վրա ազդեցություն թողած հայ, ամերիկյան և համաշխարհային գրականության հեղինակների շրջանակը՝ նրանց բաժանելով երկու խմբի՝ գրողներ, որոնցից Կարապենցը գաղափարական ազդեցություն է կրել գրողներ, որոնցից գեղարվեստական արձակի տեխնիկա, ոճական հնարքներ և վարպետություն է սովորել:

ԳԼՈՒԽ ԱՈՒԱՋԻՆ

ՏԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԵՎ ԳՈՅԱՊԱՇՏԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ
ԿԱՐԱՊԵՆՑԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ. «ԱՆԾԱՆՈՒԹ ՀՈԳԻՆԵՐ» ՇԱՐՔԸ

Առաջին գլխում նախ անդրադարձել ենք 19-րդ դարավերջին սկիզբ առած և 20-րդ դարի փիլիսոփայության ու գեղարվեստական գրականության մեջ լայն տարածում գտած գոյապաշտական ուղղության փիլիսոփայական դրույթներին ու գրական մոտիվներին՝ ներկայացնելով այն անդրադարձները, նկատումներն ու ընդհանրացումները, որ Կարապենցն իր փորձագրություններում կատարել է այդ ուղղության և դրա ակունքներում կանգնած հեղինակների վերաբերյալ: Գոյապաշտության ազդեցությունից զերծ չմնաց նաև ամերիկյան գրականությունը. «Հագիւ հարիւր տարուայ զարգացում» ունեցող գոյապաշտությունը, «տարածուելով Եւրոպայի չորս բոլորը», կանգ առավ «Անգլիայի ու Հիւսիսային Ամերիկայի ափերին ինչպէս անկոչ հիւր»², - գրում է Կարապենցը, նկատելով, որ ամերիկյան և ամերիկահայ արձակին բնորոշ էին տարածաշրջանի ու միջավայրի առանձնահատկություններից բխող շեշտադրումները և մոտիվները՝ պահպանելով ամերիկյան գրականության առանձնահատկություններից մեկը՝ «գործողութիւնն է առանցքը՝ առանց վերլուծման կամ ներհայեցողութեան: Հերոսները մտորումների ցանցի մէջ չեն մտնում: Նրանք գիտեն իրենց գնալիք ճամբան: Սովորաբար, նրանք օժտուած են գործնական լուծումներ տալու խնդիրներին»³:

Կարապենցի պատմվածքների գոյապաշտական բնույթը մեր գրականագիտության կողմից նկատված իրողություն է, բայց մասնակի նկատումները խորքային վերլուծության չեն ենթարկվել:

Ըստ գրականագետ Գ. Հակոբյանի, Կարապենցի «չափավոր էկզիստենցիալզմը» բնորոշվում է «ոչ Մուզիլի այպանող սատիրայի պես, այլ թեթև կարեկից հումորով, ոչ Մարսել Պրուստի և Սարտրի օտարված ու խորթացած, անտեսված, շփոթված մարդու, անհեթեթ գոյության ահագնությունը խորաքննող, այլ՝ ընդամենը դրվագ վերհանող, ներքին կղզյակում իր գոյությունը մանրահատող մեր

² Կարապենց Յ., Երկու աշխարհ. գրական փորձագրութիւններ, Մասաչուսեթս, 1992, էջ 63:

³ Նույն տեղում, էջ 69:

ժամանակակցի իրականության «գաղտնագերծամբ»։ գրողի «հերոսները իրենց ներքին տարագրությանը զուգահերոս են հարյուրավոր անհանգրվանների, մենակների և շփոթվածների գոյությանը»⁴։ Այսպիսով, գրականագետն ուրվագծում է Կարապետի գոյապաշտության մի շատ կարևոր առանձնահատկություն՝ տարագրության, այսինքն՝ ազգային նշանակության թեմատիկայի և գոյապաշտության համամարդկային մոտիվների զուգահերոսը նրա արձակում։ Այնինչ գրողի արձակն ունի մի շատ կարևոր առանձնահատկություն։ Հայը նրա պատմվածքներում տառապում և օտարվում է ոչ թե ազգային պատկանելության պատճառով, ինչպես Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպում, այլ որովհետև օտար է միջավայրը, խորթ է երկնաքերների ու մեքենայացված կյանքի՝ մարդուն օտարող իրականությունը։ Բնականաբար, ի տարբերություն Շահնուրի վեպի, ազգային խնդիրները Կարապետի պատմվածքներից շատերում բացակայում են կամ մղած են երկրորդական պլան, բայց առավել առաջնային են գոյապաշտական մոտիվները։ Կարապետն ընդլայնում է նաև ազգային թեմատիկայի ընդգրկումները. նրա պատմվածքներից շատերի՝ հատկապես «Անձանոթ հոգիներ» շարքի հերոսները միայնակ օտարականներ են՝ Նահանգներում հայտնված տարագիր հայը, ռուսը կամ հույնը, ու թեև տարբեր ազգերի հերոսներն առանձնանում են իրենց ազգային խառնվածքին բնորոշ գծերով, բայց բոլորին միավորում է տարագրության փաստը։ Այսպիսով, մենք ցույց ենք տվել, որ Կարապետն իրականությունից և հասարակությունից մարդու օտարման գոյապաշտական խնդիրը տարագրության պրիզմայով է բեկում։

«Անձանոթ հոգիներ» շարքի պատմվածքներում մարդն անցորդ է, ասորում է կյանքը «անցորդի պես, անցողակի ու անճիգ, այնպես՝ ինչպես յատուկ է արևափրքների բովից անցած մարդկանց»⁵։ «Այս «չափավոր էկզիստենցիալիզմի» տիրույթներում»՝ «մարդու (անցորդի) և հանգրվանի (ճանապարհի) բախումներն ու դիմադարձությունը»⁶ առանցքային փոխաբերություններ են։ Անցորդի կերպարը գրողի արձակում համեմատել ենք անցորդի կերպարի հետ Կոստան Զարյանի արձակում։ Կարապետի Զարյանի արձակի հետ ունեցած աղերսները ժամանակին նկատել է նաև Համաստեղը⁷։ Եթե Կ. Զարյանի արձակում *անցորդը* ենթադրում է ուշադրության համակ կենտրոնացում, վերլուծություն, ազգային ինքնության տարանջատում օտար մշակութային միջավայրից, ապա Կարապետի պատմվածքներում՝ ուշադրության ու ես-ի համակ կորուստ։ Ուստի պատահական չէ, որ մարդկային կյանքը նեղանում, սահմանափակվում է մերթ նավի («Վերջերս ո՞վ է գնացել Հալիֆաքս»), մերթ՝ գնացքի («Մի այլ քաղաքում»), մերթ՝ հանրակառքի («Որևէ տեղից մինչև այստեղ»), մերթ էլ՝ ինքնաշարժի խցիկով («Այստեղից մինչև հավիտենականություն»)՝ նավը, գնացքը, էլեկտրաքարշը, մեքենան մարդկային գոյության՝ շարժման մեջ դրված խորհրդանշաններ են։ Նավը, օրինակ, անհանգրվան գոյության այլաբանությունն է («Վերջերս ո՞վ է գնացել Հալիֆաքս»), այն հանձնված է տարերքների՝ քամիների ու ջրային հոսանքների քմահաճույքին։ Այսպիսով, որպես «անձանոթ հոգիների» հանդիպավայր, որպես պատմվածքների գործողության վայր՝ Կարապետն ընտրում է այնպիսի տեղանք, ուր մարդիկ հանդիպում են կարճ ընթացքում, իսկ հետո հարկադրված են բաժանվել՝ չհասցնելով մինչև վերջ ճանաչել միմյանց՝

⁴ Հակոբյան Գր., Հակոբ Կարապետի վերջին ժողովածուն, Լրագիր, 1994, նոյեմբերի 16:

⁵ Կարապետ Զ., Անձանոթ հոգիներ, Վաշինգտոն, 1970, էջ 153:

⁶ Հակոբյան Գր., Հակոբ Կարապետի վերջին ժողովածուն, Լրագիր, 1994, նոյեմբերի 16:

⁷ Համաստեղը՝ Կարապետին. նամականի, Գրական թերթ, 1995, 9 հունիսի, էջ 2:

արձանագրելով սոսկ, որ, անծանոթ ու օտար լինելով հանդերձ, ինչ-որ հարազատություն է միավորում իրենց, և դա անցորդ, օտարական լինելու բոլորին բախտակից ու հարազատ դարձնող ճակատագիրն է: Այսպիսով, անդրադարձել ենք գոյապաշտության ոգին արտահայտող պատկերների և փոխաբերությունների՝ կղզու կամ ծովի (ջրի) պատկեր, տան բացակայության փոխաբերություն: Այսպես, գոյապաշտության առանցքային թեմաներից է մարդու մենության թեման, իսկ կղզին Կարապենցի այս և այլ շարքերի պատմվածքներում մենության փոխաբերություն է. գրողը հաճախ մարդկանց համեմատում է կղզյակների հետ, այնինչ ջուրը և ծովը նրա արձակում կեցության հենարանների բացակայությունն են խորհրդանշում: Ծովի պատկերը («Վերջերս ո՞վ է գնացել Հալիֆաքս») համեմատել ենք նաև Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայի ծովի պատկերի հետ: Պատմվածքի հենց սկզբում հիշվում է ծովը և ակնարկվում, որ հերոսը ծովը պիտի նետվի, ծովը «մահուան անխուսափելիության մասին»(70) է հիշեցնում: Շանթի արեղայի նման ևս Կարապենցի հերոսը նետվում է ծովը: Թե՛ Շանթի դրամայում, թե՛ Կարապենցի պատմվածքում հերոսների՝ ծովը նետվելը մի տեսակ երկիմաստ է, կարելի է հասկանալ, որ արեղան անձնասպան է լինում, բայց կարելի է հասկանալ նաև, որ աշխարհիկ կյանքն է կանոն նրան: Կարապենցի պատմվածքը ևս խորհրդանշական ավարտ ունի: Կարելի է պնդել, որ նրա հերոսն անձնասպան է լինում, բայց նույն հաջողությամբ կարելի է պնդել նաև, որ նրան կլանում է «մենութեան ծովը».- չէ՞ որ մեկ այլ տեղ նա իր մենությունն անվանում էր «ահռելի», ինչպես ահռելի կարելի է կոչել ծովը, այսինքն՝ պատմվածքում ծովն ուղղակիորեն դառնում է մենության փոխաբերությունը: «Անծանոթ հոգիներ» շարքի համանուն պատմվածքում այն ճահճի պատկերով է դրսևորվում. «Պարսպ էր իր կեանքը: Ընկել էր ճահճի մէջ և դուրս գալ չէր կարողանում: Կորցրել էր պայքարի ոգին (պայքարի ոգին Կարապենցի հերոսները վերագտնում են «Նոր աշխարհի հին սերմնացանները» շարքի հերոսները) և ակամայից մխրճուել էր յուսահատութեան գորշ ցանցերի մէջ» (130): Գոյապաշտության հիմնական հասկացությունների թվում անդրադարձել ենք հուսալքությանը: Ինչպես Կարապենցն է բնորոշում՝ «գոյապաշտութեան ամենից խօսուն տեսաբան»՝ Սարտրն իր «Գոյապաշտությունը հումանիզմ է» էսսեում որպես այդ ուղղության հիմնական հասկացություններ առանձնացնում է տագնապը, լքվածությունն ու հուսալքությունը: Լքվածություն ասելով՝ Սարտրը հասկանում էր Աստծո բացակայությունը: Աստված գոյություն չունի, հետևապես մարդը հենարան չունի ոչ արտաքին աշխարհում, ոչ էլ իր ներսում: Այստեղից է բխում նրա հուսալքությունը՝ Իմա՝ հուսալքությունը հենարանի՝ մարդուց դուրս գտնվող և մարդկային կյանքը կամ գոյությունն իմաստավորող գաղափարի բացակայությունն է, լինի Աստված, թե հայրենիք: Կարապենցի հերոսների «գոյաբանական» հենարանը հայրենիքն է: «Ի՞նչ է կեանքը՝ առանց հայրենական օջախի» (130),- խորհում է հերոսներից մեկը: Ուստի հուսալքությունը, ի տարբերություն գոյապաշտների, հայրենիքի բացակայությունից է բխում:

Ատենախոսության այս գլխում գոյապաշտության համատեքստում գրողի պատմվածքները վերլուծելիս զուգահեռներ ենք անցկացրել այն գրողների հետ (Կաֆկա, Բեկետ, Սարտր, Կամյուի), որոնց ազդեցությունն իր արձակի վրա նշել է Կարապենցն ինքը:

® Сартр Ж.-П., Экзистенциализм-это гуманизм, Сумерки богов, գրքում, М., 1989, стр. 326-327.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՏԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ.

«ՆՈՐ ԱՇԽԱՐՀԻ ՀԻՆ ՍԵՐՄԱՑԱՆՆԵՐԸ» ՇԱՐՔԸ

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է «Նոր աշխարհի հին սերմնացանները (1975) շարքին: «Անծանոթ հոգիներ» (1970) շարքի վերջին՝ «Այցելուն» պատմվածքն, ըստ էության, կարող էր գետեղված լինել հենց այս շարքում: Պատմվածքի հերոսը, երկար ժամանակ կյանքը ապրելով իբրև մահվան սպասում (գոյապաշտները կյանքն ընկալում էին իբրև մահվան նախապատրաստություն), ի վերջո կարողանում է մերժել մահը, ուժ ու եռանդ գտնել՝ վերագալու կյանքի բերկրանքը և հող է փորում (ասես սեփական գերեզմանի հողը փորելու փոխարեն) տուն կառուցելու համար: Այս կենսահաստատ որոշումամբ էլ ավարտվում է «Անծանոթ հոգիներ» շարքը: Իր հերոսներին կոչելով սերմնացաններ՝ գրողը շեշտում է օտար հողում նրանց գործունեության կենսահաստատ բնույթը: Կարապենցի արծակը գոյապաշտական թեմատիկայից («Անծանոթ հոգիներ») անցում է կատարում ազգային թեմատիկայի («Նոր աշխարհի հին սերմնացանները»): Իր լավագույն փորձագրություններից մեկում գրողը Կամյուի ոգով փիլիսոփայում է այսպես. «Ապրել կեանքը ամբողջ էությամբ, ապա իմաստաւորել կեանքը: Ոչինչ այնքան անհեթեթ է կեանքում որքան ոչնչապաշտութիւնը: Դիւրին է մեռնելը: Կարեւորը ապրելն է: Պայքարել Պրոմեթէոսի նման, յարատեւել Սիզիփոսի պէս: Լինել ազատ, առանց կաշկանդելու այլոց ազատութիւնը, սիրել եսը առանց եսապաշտութեան, իսկ հարկ եղած դէպքում զոհել եսը յանուն ընդհանուրի վեհ իդէալների: Այո՛, մենակ է մարդը, սակայն այդ մենակութիւնը մարդ լինելու աստուածային տխրութիւնն է՝ խոհականութեամբ յագեցած, ինչպէս նաեւ աղբիւրը նրա ստեղծագործական ճիգերի: Վերջին հաշուով, միակ ապաւենը ընտանիքն է, հարազատ ժողովուրդն ու համայն մարդկութիւնը: Այլապէս անարմատ գոյապաշտին սպասում է յուսալքութիւնը, իր գոյութեան քառակուսի տուփն ու շարունակ մահը»⁹: Այս հավատամքն էլ հենց, իբրև «նոր աշխարհում»՝ Ամերիկայում հայտնված հերոսների դավանանք, ընկած է «Նոր աշխարհի հին սերմնացանները» շարքի հիմքում, ըստ որում «Անծանոթ հոգիներ» շարքի միայնակ տարագիրները չեն նրանք, այլ համայնք կազմած, մեկը մյուսին թև ու թիկունք դարձած, հայության ու ազգի գաղափարին նվիրված հայեր, իսկ պատմվածաշարը Կարապենցն անվանել է «ձօն նրանց, ովքեր մերժեցին մահն ու պարտութիւնը, եւ նրանց, ովքեր վերադարձի երազը սրտում՝ գրկեցին օտար հողը»¹⁰: Եթե «Անծանոթ հոգիներ» պատմվածաշարի հերոսներից շատերն օտարության մեջ չէին գտնում գոյության հիմքերը և այլ ելք չէին գտնում, քան կամավոր մահն ու ինքնակործանումը, ապա «հին սերմնացաններն» արմատներ են ձգել «նոր աշխարհում», ամուր կառչել կյանքից՝ դառնալով «Անծանոթ հոգիներ» շարքի մեկ ուրիշ՝ «Որևէ տեղից մինչև այստեղ» պատմվածքի հեղինակ-պատմողի իդէալի կրողը. այդ իդէալը հայի՝ օտար հողում «հոգեղեն հայրենիք» կերտելու ու հարատևելու արհուրյունն է: Հայի ազգային խառնվածքի այս կենսահաստատ բնույթն է, որ տարբեր բնավորության տեր մարդկանց մեջ հետաքրքրում է Կարապենցին: Հայը պիտի կարողանա Հայաստանում «նյութական հայրենիք», իսկ սփյուռքում՝ «հոգեկան

⁹ Կարապենց Յ., Երկու աշխարհ. գրական փորձագրութիւններ, Մասաչուսեթս, 1992, էջ 73:

¹⁰ Կարապենց Հ., Նոր աշխարհի հին սերմնացանները, Վաշինգտոն, 1975, էջ 6: Հետայսու սույն գրքից արված մեջբերումների էջերը կնշվեն փակագծերում:

Հայաստան» կերտել: Սա նշանակում է, որ պատմվածքները շարքի մեջ միավորված են հերոսների ընդհանրությամբ: «Ժամանակի ու միջավայրի տեսակետից» ևս, ինչպես գրողն ինքն է գրում պատմվածաշարի առաջաբանում, «նիւթերը շողկապուրած են իրար՝ կազմելով վեպի համար անհրաժեշտ ներքին համադրությունը»⁽⁵⁾: «Ի՞նչ է այս գիրքը,- գրում է Հ. Թամրազյանը,- ժողովածո՞ւ՝ տասը առանձին պատմվածքներով, թե՛ վեպ, քանի որ այդ բոլորը ներքնապես կապված են իրար հետ: Այս հարցին նա առանձին կարևորություն չի տալիս, այլ շեշտում է ստեղծելու եղանակը՝ մի մեծ գաղափար ընդգծելու, մասնավորապես հայության մաքառումների հավաքական պատկերը ստեղծելու»¹¹:

Այս գլխում անդրադարձել ենք համաշխարհային գրականության մեջ ժամանակի ու միջավայրի միասնությամբ և ընդհանուր հերոսներով շարք կազմող, վեպի ժանրին հարող («վեպ ձևացող պատմվածաշար»¹²) պատմվածաշարերին՝ նկատելով, որ ընդհանուրը վեպ-քրոնիկոնի և պատմվածքների այսօրինակ շարքերի միջև ոչ այնքան վեպին բնորոշ դիպաշարը, որքան կերպարներն ու տեղանքի կոլորիտը: «Նոր աշխարհի հին սերմնացանները» ժանրի տեսանկյունից համեմատելի է Շերվուդ Անդերսոնի «Ուայնսբուրգ-Օհայո», Ուիլյամ Ֆոլքների «Անպարտելիների», Իսահակ Բաբելի «Օդեսյան պատմվածքների» հետ: Տեղանքը, ուր ծավալվում են պատմվածաշարի գործողությունները, մտացածին Ջեֆրսոն քաղաքն է, որ հիշեցնում է Սարոյանի Իթաքան, Ռեյմոնդ Քարվերի կամ Ֆոլքների Ջեֆերսոնը կամ Մարկեսի Մակոնդոն: Վերջինս Կարապենցին հարազատ է, թե՛ մարդկային մենության խնդրի արձարծումներով, թե՛ արտասովոր ու զարմանահրաշ մարդկանց կերպարներով: «Անձանոթ հոգիներ» շարքում բնավ ընդգծված չէր հայի ազգային նկարագիրը, հայն այնտեղ ոչնչով չէր տարբերվում օտարազգիներից, քանի որ օտարության զգացումն ազգային նկարագիր չի ենթադրում, և դա էր պատճառը, որ հայ հերոսներն իրենց ճանաչում էին օտարազգիների մեջ:

«Նոր աշխարհի հին սերմնացանները» վառ ու ինքնատիպ, իրենց ազգային պատկերացումներով առանձնացող, կոլորիտային կերպարներ են, և ազգային խառնվածքի շեշտված նկարագրով ազգային դյուցազնավեպի ու Սարոյանի զարմանահրաշ, խենթ և փոքրիշատե «ծուռ» հերոսներին են հիշեցնում: Կարապենցը պատմվածաշարի՝ «Ջեֆրսոն, ԱՄՆ» վերնագրված մուտքում փորձում է մի քանի ընդհանուր շտրիխով ուրվագծել «ամերիկեան շորերի մեջ նոյնիսկ գիւղացի», իր անհատական կյանքը լավագույնս կազմակերպող, բայց հասարականի մեջ «անփոյթ, անշնորհք ու անկազմակերպ» հայի ազգային, ընդհանրական նկարագիրը, իսկ առանձին պատմվածքներում ասպարեզ բերել բազմաթիվ կերպարներ՝ Իշխան Փիլիպոս, Աբգար ամի, Գոնտով Առաքել, Սասունցի Սարգիս, Բաղեշյի Սամսոն, Սեբաստացի Մելքոն, Վանեցի Մանուկ և այլն, ովքեր ազգային ընդհանուր նկարագրի մասնավորումներով ազգային բնավորության բազմազանության մի ամբողջ պատկերասրահ են կազմում: Ինչ վերաբերում է մտացածին տեղանքի խնդրին, ապա համաշխարհային գրականության տարածված այդ հնարանքը, որքան էլ յուրաքանչյուր, առանձին դեպքում տարբեր, այնուամենայնիվ ընդհանուր միտումի արտահայտություն է՝ ստեղծել գեղարվեստական ունիվերսում (լատ. *universum*. «ամբողջություն, ընդհանրականություն», «աշխարհն իբրև ամբողջություն»), աշխարհի և իրականության ընդհանրական, ամբողջական մի մոդել: Կարապենցի Ջեֆրսոնը ամերիկյան իրականության մեջ հայության և սփյուռքի խորհրդանիշն է, և այդքանով

¹¹ Կարապենց Հ., Երկեր, Եր., Նաիրի, 1995, էջ 6-7:

¹² Այդպես Ռեյմոնդ Անդերսոնի է բնորոշել իր «Մարսյան քրոնիկների» ժանրը:

իսկ արդեն տարբեր է ոչ միայն Ֆոլքների Ջեֆըրսոնից, այլև համաշխարհային գրականության մյուս մտացածին տեղանքներից: Եթե «Անձանոթ հոգիներ» պատմվածաշարում նկարագրվում էին ամերիկյան այն մեծ քաղաքները, որոնցում հայը մենակ և օտար էր՝ չունենալով հայրենակիցներ, կամ այդ հայրենակիցների մեջ չգտնելով իր հենարանն ու ապավենը, չգտնելով միացնող ու կապող շղթան, հարազատության զգացումը, կորցրած իր վստահությունը, ապա Ջեֆըրսոնում հայը գտնում է իր հենարանը, տերուտիրական է զգում իրեն, նույնիսկ հայությունն այստեղ այնքան է բազմացել, որ դարձել է «մեծամասնություն փոքրամասնությունների մեջ»: Ջեֆըրսոնն ամերիկյան այն իրականություն է, որի վրա հայն իր անհատականության, իր վառ արտահայտված ազգային խառնվածքի դրոշմն է դրել:

Եթե նախորդ պատմվածքներում ամերիկյան իրականությունը ճնշում էր գործադրում հայ մարդու անպաշտպան հոգու վրա՝ ստիպելով նրան զգալ միայնակ ու օտար, վերապրել ատոմների պես տրոհված ու անջատ-անջատ հասարակության օտարված անդամը լինելու զգացումը, ապա այս շարքի պատմվածքներում արդեն հայն «առողջ հավաքականության» անդամ է: Այս իմաստով Կարապետի Ջեֆըրսոնը հայերի համար ոչ այնքան աշխարհագրական հենակ է, որքան հանգրվան, ուր «եկել են բուժելու իրենց վերքերը, ուռքի կանգնելու եւ վերադառնալու տուն: Երկիր: Ու մնացել են: Մնացել են, խորացել ու թախծոտել: Հին սերունդը յուշերով է ապրում: Միջին սերունդը ընկել է երկու քարերի արանքում: Իսկ նոր սերունդը փարթամ բոյսի պես մեծացել, դարձել է ամերիկացի՝ յաճախ խարխափելով իր ազգային ծագման խորհրդաւոր կաճաններում» (11): Այս նոր սերնդին գրողն արևաշատ հողում ծլարձակած սոճիների հետ է համեմատում: Ծոռղներին թվում է, թե իրենց զավակներն ուժացել են, թեև իրականում այդպես չէ: Նրանք պաշտում են հայկական մշակույթը՝ հատկապես հայկական շուրջպարն ու երաժշտությունը: Նրանք համոզված են, որ միայն իրենց ջանքերով է հնարավոր լուծել Հայ Դատը: Նոր աշխարհում հանրային կարծիք են ձևավորում հոգուտ հայության: Մի խոսքով, հայն այստեղ իրեն այնքան զորավոր է զգում, որ կարողանում է ոչ միայն *պահպանել ազգային ինքնությունը, այլև դրա շնորհիվ ձևափոխել օտար իրականությունը*: Այնուամենայնիվ Կարապետի ուշադրության կենտրոնում է նաև հայրերի և որդիների բախման բախման խնդիրը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՏԿԵՐԸ ԿԱՐԱՊԵՆՏԻ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ. «ՄԻՋՆԱՐԱՐ» ԵՎ

«ԱՄԵՐԻԿՅԱՆ ՇՈՒՐՋՊԱՐ» ՇԱՐՔԵՐԸ

Ատենախոսության այսզ լուխը նվիրված է համամարդկային նշանակության թեմաների ու խնդիրների ընդհանրացումների տեսանկյունից Կարապետի առավել խորքային՝ «Միջնարար» պատմվածաշարին, որի հերոսներից շատերն ազգությամբ հայ են, բայց հայի կերպարում արդեն բացակայում է ոչ միայն ազգային նկարագիրը, այլև մարդկային բնավորությունն ու խառնվածքը: Գրողն «ալ չի խօսիր մարդուն մասին, այլ կը խօսի՝ մարդկութեան. ալ չի կեդրոնանար տարանջատուած երեւոյթին վրայ, այլ երեւոյթներու՝ որոնց մէջ համախմբուած է ամբողջ մարդկութիւնը իր

վախերովն ու կասկածներովը»¹³ : Վերացարկումն ազգային ու մարդկային խառնվածքից ինքնին ենթադրում է նաև խիստ որոշակի վերացարկում ընկերային կյանքից: «Միջնարար» շարքի պատմվածքներում, աննշան բացառություններով, բացակայում է հանրային կյանքի համապատկերը, սոցիալական ընդհանրապես, մինչդեռ գերակշռում են բնագանցական բովանդակության վերացական պատկերները: Այս շարքում բացակայում է սյուժետային կառույցը, և գերակշռում է խոհագրական տարրը: Պատմվածաշարին բնորոշ է նաև ժամանակի ու տարածության յուրօրինակ ընկալում, որով պայմանավորված է ոչ միայն ստեղծագործությունների տարածական պայմանակությունը, ժամանակի հարաբերականությունը, այլև՝ սյուժետային անորոշությունն ու ներսուզումը հերոսների ներաշխարհ: Փորձագրություններից մեկում գրողն այսպես է մեկնաբանում այդ երևույթը. «Իմ որոշ պատմվածքներում եւ մի շարք գործերում առկա են ժամանակի հասկացողութեան երկու սլաքներ: Ժամացոյցի ժամանակը: Եվ, այսպէս ասած՝ տիեզերային ժամանակը, որը սահման չունի, կարգ ու կանոն չունի: Իրադրութիւնները լողում են առանց նախատեսուած օրէնքի, ուր անցեալ, ներկայ ու ապագայ խառնուած են իրար, տարերային, քառասային, ինչպէս կէանքն ու իրադրութիւնները, մինչեւ որ գալիս է արուեստը սահման ու կաղապար դնելու, շրջանակի մէջ առնելու սկիզբն ու վերջը, ուստի եւ պաստառի մէջ քիւրեղացած պահը, գրքերի մէջ կուտակուած բառերը, կամ քարացած արձանը... Տիեզերային այս ճօճանակը ինձ պատեհութիւն է տալիս սանձարձակօրէն թափանցելու իմ տիպարների ներքին անձանքի խորքերը, շարժելու մինչ այդ անթափանց տիղմերը, երեւան բերելու այն ինչ միշտ կար եւ որին սակայն անգիտակ էին իրենք՝ տիպարները: Այսպիսով տիպարը թաքնուելու սեղ չունի: Հանդես է գալիս արտաքինապէս ու ներքնապէս միանգամայն մերկ: Գիտեմ, որ վրանգաւոր թեքնիք է: Ոմանք կարող են գառանցանքի վերագրել, ոմանք շփոթի մատնուել, սակայն ահագանգի պէտք չկայ»¹⁴ : Անկապակից, հատվածական դրվագներն այս պատմվածաշարի գործերում ոչ այլ ինչ են, եթե ոչ երագային պատկերներ, ենթագիտակցական իրողություններ, ինչպես երագում, շարքի պատմվածքներում ևս անկապակից ու անհեթեթ մտքերը, հիշողության անկապակից դրվագները, տենդահար երևակայության պատկերները, մենության սուր զգացումը հաջորդում են իրար առանց տրամաբանության: Հիշողության մեջ անցյալը հառնում է որպես իրադարձությունների, դեպքերի կտրտված, ոչ մի կերպ չկապակցվող հատվածներ: Ոչ մի կերպ չեն կապվում նաև մարդկային կյանքը և մահվան հանգամանքները: Թվում է՝ մահն ինչ-որ ձևով պիտի կյանքի տրամաբանական եզրահանգումը լիներ, այնինչ ոչ մի տրամաբանություն չի կարող շողկապել մահվան հանգամանքները և մարդու ապրած կյանքը:

Դարձյալ, ինչպես «Անձանոթ հոգիներ»-ում «Միջնարար» շարքում ևս առկա են էկզիստենցիալ մոտիվներ, բայց արդեն ոչ ազգային, այլ առավել ընդհանուր՝ համամարդկային համատեքստում: Հերոսները դեգերումների մեջ են, որոնք կեցության իմաստի որոնումների յուրօրինակ սյուժետային արտապատկերումներ են, իսկ կեցության իմաստի էկզիստենցիալ որոնումներն այստեղ մարդկային կյանքի և աշխարհի մոտալուտ վերջի տագնապն են ազդարարում: Այդ մոտալուտ վերջն իր հետ բերում է նաև ամենայն ինչի, նոյնիսկ մարդկային ստեղծագործության և արվեստի

¹³ Ալիշան Ն., Յակոբ Կարապետցի իր արձակին մէջէն, Շիրակ, Պէյրուք, 1986, օգոստոս, թիւ 8, էջ 74:

¹⁴ Կարապետցի Յ., Երկու աշխարհ. գրական փորձագրութիւններ, Մասաչուսեթս, 1992, էջ 78-79:

անիմաստության թեման («Դոյակը», «Անտառում»): Ինչ է լինելու արվեստի գլուխգործոցների ճակատագիրը, երբ գա աշխարհի վերջը, կամ ինչ իմաստ ունի արվեստի ևս մեկ գլուխգործոց ավելացնել, եթե վերջավոր են աշխարհն ու մարդկությունը: Սա Կարապետյանի այս պատմվածաշարում հուզող հարցերից է, և այն արձարձելու նպատակով նա իր պատմվածքներում ապոկալիպտիկ մթնոլորտ է ստեղծում, իսկ հերոսներն այդ հարցի շուրջ խորհում են գոյապաշտության ոգով՝ հիշեցնելով Բեկեսի ստեղծագործական լույթայն պատճառը (աբսուրդի մասին գրող հեղինակն ի վերջո հասկացավ, որ անհեթեթ է նաև գրելն ու դադարեց գրել): «Ինչո՞ւ գրել, յանուն ինչի՞», երբ ժամանակը մեռնում է, երբ անհեթեթ է համակ գոյութունը: Այսպես պիտի սկսել գոյապաշտ գրողը»¹⁵, - գրում է Կարապետյանը «Գրողը իր հետ, այլոց հետ» էսսեում: Նրա հերոսները հրաժարվում են ամեն ինչից. հրաժարվելով քաղաքակրթությունից, դեգերում են սեփական հոգու մատուցներում՝ փորձելով մերժենալ սեփական ինքնությանը կամ բնությանը (որ նույնն է), որից վաղուց օտարվել են: Մարդը քաղաքներ է կառուցել, քաղաքակրթության նոր բարելոնյան աշտարակ կառուցել, մեքենաներ հավաքել՝ դառնալով մեքենայական կյանքի գերի՝ հեռանալով իր ինքնությունից, կեղծ պատկերացումներ ձեռք բերելով, խեղաթյուրելով Աստծո պատկերը («Ամեն ոք ինձ փրկել է ուզում»): Գիտության և տեխնիկայի աննախադեպ զարգացումը, մեքենայացման անկասելի ընթացքը, պատերազմները տեխնոլոգիական դարաշրջանում աննակատելիորեն փոխել են իրականության ընկալման և մարդկային փոխհարաբերությունների բնույթը: «Մեքենայի մուտքը, - գրում է Կարապետյանը, - ոչ միայն յեղաշրջեց համաշխարհային տնտեսութունը, քաղաքական համակարգն ու ընկերային բարքերն ու հասկացողությունները, այլ նաեւ մինչ այդ հաստատուն նկատուող իմաստասիրական կոռուստները: Կենսքի մեքենայացումով մարդը կորցրեց իր խարիսխը, սկսեց խորխափել խաւար, անծայր լաբիրինթոսում՝ մի պատահ լոյսի կառչելով իմաստաւորելու համար իր գոյութունը: Մեքենան ճգմեց անհատին, սպանեց նրա անհատականութիւնը և իր հողից ու համայնքից խլելով նրան՝ նետեց անորոշի երախը: Մարդը սկսեց օտարանալ: Նա խորթացաւ իր հետ, աշխարհի հետ»¹⁶: Մարդու մեջ մահանում է մարդը, սպառվում է մարդկայինը, ամենամարդկայինը՝ իր տեսակին ապրումակցելու հատկությունը, և քանի որ ժամանակակից մարդու կյանքն այնքան գերհագեցած է արտաքին աշխարհից իր ներաշխարհի վրա գրոհող տեղեկատվությամբ ու տպավորությունների հոսքով, ապա նա չի հասցնում նույնիսկ հետադարձ հայացքով իմաստավորել այն ամենը, ինչ տեսնում է, այսինքն՝ ինչ-որ իմաստով նույնիսկ ընկալում էլ չկա. մարդու առջևով անցնում են իրարարժույթուններ, որոնք նա այդպես էլ չի հասցնում ընկալել:

«Միջնարար» շարքի պատմվածքներից յուրաքանչյուրը, ըստ էության, քաղաքակրթական ճգնաժամի համապատկերի առանձին պատկեր է, իսկ այդ ճգնաժամի պատճառը Կարապետյանը փիլիսոփայական հենքի բացակայության մեջ է տեսում: Իբրև ամփոփում տեղին է մեջբերել հենց գրողի իր իսկ շարքին տված ամփոփումը. ««Միջնարար» հատորի ենթահողը ճարտարունեստականացած հասարակարգի սրընթաց երախում մոլորուած մարդն է, որը շարունակ գոյնզգոյն կոճակներ է սեղմում, սակայն չգիտէ պատճառը: Էլեկտրոնիկ կազմաձեւերը վայրկեանական հրաշքներ են գործում, մարդը Լուսին է իջնում, հաղորդակցվում աստղերի հետ, սակայն անկարող՝ հաղորդակցուելու իր հարեանի հետ: Քաղաքակրթութեան հիմքը միշտ էլ փիլիսոփայութիւնն է եղել, որի վրայ կառուցուել

¹⁵Նույն տեղում, էջ 61:

¹⁶Նույն տեղում, էջ 61:

են ընկերաբանական ու քաղաքական տեսությունները, մշակութային ուղղություններն ու տնտեսական այն գործոնները, որոնց հաաքարար արդիւնաբերական առաջադիմութիւն ենք բնորոշում: Արդիւնաբերական յեղաշրջման երրորդ փուլի մէջ ենք ու սակայն արդի քաղաքակրթութեանը պակասում է փիլիսոփայական այն անհրաժեշտ յենակը, առանց որի, գնացքը անգլուխ ու աննպատակ առաջ է սուրում, քանդելով իր ճամբին գտնուող դարատուր հանգանակները: Փիլիսոփայական մտքի բացակայութեան պատճառով խարխլում են բարոյական չափանիշները, այլանդակում կրօնական հասկացողութիւնները, գունաթափում արուեստից նկրտումները: Մարդը մնում է մենակ, նոյնիսկ անգիտակ: Այս մօտալուտ սնանկութիւնն է, որ ապրում են իմ հերոսները: Ահա թէ ինչու հարցականների առջեւ են կանգնած նրանք, համոզուելով, որ սեռային յարաբերութիւնը ամենեւին էլ սէր չէ, որ նիւթական բարօրութիւնը տակաւին յաջողութիւն չէ, որ դիրք ու հռչակ տակաւին ոչինչ են նշանակում, եթէ պակասում է ներքին խարխիւր, այն է՝ կեանքի փիլիսոփայական յենարանը»¹⁷:

Շարունակելով նախորդ շարքերում արծարծված գոյապաշտական թեմաներն ու մոտիվները, մասնավորապէս օտարման և մենության թեման, Կարապետն իր փոքր արձակում «Ամերիկյան շուրջպար» ժողովածուով նորութիւն է բերում: Նախ մարդկային օտարման ու մենության թեման այս շարքի գործերում նա դրամատիկ իրավիճակների պատկերմամբ է արտացոլում, այս իմաստով նրա գոյապաշտությունը հիշեցնում է 20-րդ դարի ամերիկյան պատմվածքի վարպետներից Ռեյմոնդ Քարվերին, որին գրողն իր «ուսուցիչներից» էր համարում: Նրա պատմվածքները ևս պատկերում են մարդկային փոխհարաբերությունների դրաման ամերիկյան իրականութան համապատկերում: Ի տարբերություն «Միջնարար» շարքի՝ «Ամերիկյան շուրջպար»-ի պատմվածքները նյութի իմաստով իրապէս կենսական գործեր են՝ զերծ գրական պայմանականություններից: Եվ Կարապետն ինքն է «Գրողը եւ իր ճամբան» փորձագրութայան մեջ նկատում, թե այս շարքում «մտասեւեռում կայ էական լարումը դրսեւորել առօրեայ երեւոյթների մէջ»¹⁸: Եթե համեմատենք «Միջնարար» շարքի սիրային արկածներով պատմություններն ու «Ամերիկյան շուրջպարի» նոյնաբնոյթ գործերը, ապա պիտի ասենք, որ առաջինում գերակշռում էր ոչ այնքան զգացմունքը, որքան մարդու մենության վերապրումը և մենության շուրջ գեղարվեստական կերպարի տակ ծպտված հեղինակի խորհրդածումները: «Ամերիկյան շուրջպար» շարքի պատմվածքներում գերակշռողն «սահմանային իրավիճակներն» են հերոսների միջև, ապրումների ու հոգեբանութայան սրընթաց վարզացումն ու գործողությունը և ներքին հոգեբանական դիպաշարը: Կարապետն արդեն հանդես է գալիս առավելապէս որպէս հոգեբան, այլևս նախորդ պատմվածաշարերի նման նա չի փորձում թափանցել կերպարի ներաշխարհի ու պեղել մարդկային մենության և օտարման զգացումը, կամ փիլիսոփայել գոյաբանական կնճռոտ հարցերի շուրջ, այլ կերպ ասած այս շարքի գործերում սուբյեկտիվ պատումին փոխարինում է պատումի օբյեկտիվ եղանակը: Այնուամենայնիվ, որքան էլ պարադոքսալ թվա, պատումի օբյեկտիվ եղանակն է հենց գրողին հնարավորութայն ընձեռում լիովին դրսևորել մարդկային հոգեբանութայան իմացությունը: Բանն այն է, որ հենց այդ գործերում է նա հանդես գալիս որպէս արտաքուստ դիտարկող հոգեբան՝ պատկերելով այնպիսի դրվագներ, որոնցում հերոսներն իրենց խոսքի, շարժումների կամ հայացքի մեջ դրսևորում են այն, ինչ

¹⁷Նոյն տեղում, էջ 79:

¹⁸ Նոյն տեղում, էջ 77:

կատարվում է իրենց ներաշխարհում, միննույն ժամանակ ցույց տալով, թե ինչպես են նրանք խոսքերով կամ արտահայտած մտքերով փորձում կոծկել, իսկ շարժումնով կամ դիմախաղով, երբեմն էլ հայացքով մեզ ակնարկել այն, ինչ իրականում զգում են իրենք, թեև ի պատիվ գրողի վարպետության պիտի ասել նաև, որ Կարապենցն ամբողջությամբ չի էլ փորձում մերկացնել իր նրանց ներաշխարհը, այլ ապավինում է երկիմաստությանը: Հերոսներին պատկերելով ներսից՝նա նրանց ներաշխարհը ներկայացնում է միանշանակ, իսկ օբյեկտիվ պատումով այդ մեթոդը Հեմինգուեյն ու Քարվերն էին կիրառում: Կարապենցը թողնում է երկիմաստության տպավորություն, ինչը կարևոր է հատկապես այն իմաստով, որ ընթերցողը խորհելու, կռահելու, այսինքն՝ ընթերցումից հետո մտային աշխատանք կատարելու հնարավորություն ստանա: Հատկապես Հեմինգուեյլը հաճախ կրճատում էր իր պատմվածքները, հանում որոշ դրվագներ և մինչև վերջ չէր բացում իր ասելիքը: Կարապենցը ևս այս պատմվածաշարում հետևում է այդ մեթոդին՝ հաճախ օբյեկտիվ պատումի մեջ ապավինելով թերասացությանը և ստեղծագործությունը թողնելով «անավարտ» ու «թերի»: Ասվածի ամենավառ վկայություններից է շարքի լավագույն, ասես որպես ստեղծագործական կարգախոս հնչող «Ո՛վ գիտե ինչ է անցնում-դառնում մարդկանց ներսում» վերնագրով պատմվածքը, որը հիրավի կարող էր ամերիկյան լավագույն նորավիպագիրներից Անդերսոնի, Հեմինգուեյի կամ Քարվերի գրչին պատկանել: Եվ ճիշտ է նկատել Անահիտ Արամունի-Քեշիշյանը՝ գրելով, թե «Ձուտ ամերիկյան կյանքի ընդարձակ պատկեր ներկայացնող «Կարթագենի դուստրը» վեպից բացի՝ Կարապենցը, հատկապես իր «Ամերիկյան շուրջպար» պատմվածքների հավաքածուում, ոչ միայն ամերիկացի հերոսներ է ընտրել, այլ նաև մի շարք պատմվածքների ոգին ու ոճն է ամբողջովին ամերիկյան: Այսինքն գրողը ամերիկյան նոր գրականության տիպիկ ներկայացուցիչ կարող էր համարվել, եթե գրեր անգլերեն լեզվով»¹⁹: Հնարավոր է, որ զուտ ամերիկյան կյանքի նյութն է հնարավորություն տվել Կարապենցին հասնել «փոքր արձակի» այն վարպետությանն ու երբեմն նույնիսկ կատարելությանը, որին հասել էին ամերիկյան կարճ պատմվածքի որոշ վարպետներ:

¹⁹ Գարուն, 1998, թիվ 10, էջ 75:

ԵՐԱՎԱՏՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունից արված հիմնական եզրահանգումներն ամփոփել ենք հետևյալ դրույթներով.

1. Հակոբ Կարապենցի գեղարվեստական տաղանդն առանձնակի շուքով է փայլում հատկապես «փոքր արձակում»: Իր ստեղծագործական խառնվածքով նա «փոքր արձակի» իսկական վարպետ է, պատմվածքագիր-նորավիպագիր, մինչդեռ նրա վեպերը հիրավի «փոքր արձակից կրավորված միջարկություններ» կարելի է համարել, անհրաժեշտ «հաճախանքներ»՝ արդի պատմվածքին ու նորավեպին վերադառնալիս: Ափյուռքահայ արձակագիրը բազմաթիվ ազդեցություններ է կրել թե՛ հայ, թե՛ ամերիկյան և թե՛ առհասարակ համաշխարհային բազմաթիվ հեղինակներից, որոնց կարելի է բաժանել երկու խմբի՝ մի մասից հեղինակը գաղափարական ազդեցություն է կրել, քանի որ վերջիններս նրան հարազատ են աշխարհայացքով, մյուս մասից՝ գեղարվեստական արձակի տեխնիկա, ոճական հնարքներ ու վարպետություն է սովորել:

2. Կարապենցը զգալի ազդեցություն է կրել հատկապես գոյապաշտության կամ էկզիստենցիալիզմի գրականությունից: Բազմաթիվ թեմաների ու մոտիվների զուգակցված առկայությունը նրան հարազատ են դարձնում ոչ միայն գոյապաշտներին, այլև ազգությամբ հայ այն հեղինակներին (Որբունի, Շահնուր), ովքեր այս կամ այն չափով հարել են այդ ուղղությանը: Գրողի պատմվածքներից շատերի առանցքում մարդու մենության թեման է ժամանակակից ամերիկյան իրականության մեջ ու հատկապես մեծ քաղաքում և այդ թեման հաճախ բեկվում է ազգային թեմատիկայի պրիզմայով: Կարապենցի պատմվածքներից շատերի հերոսը միայնակ օտարականն է, Միացյալ Նահանգներում հայտնված տարագիր հայը, երբեմն ռուսը կամ հույնը: Իբրև ամերիկահայ արձակի ներկայացուցիչ՝ նրա ստեղծագործություններում ամերիկյան իրականության բազմաթիվ իրադարձությունների և երևույթների, այսպես կոչված ռեալիաների կարելի է հանդիպել՝ ամերիկյան քաղաքների կյանք, ուրբանիզացիա, մեքենայացում, մաքքարտիզմ, վիետնամական պատերազմ, և այլն, բայց իբրև հայ արձակագիր, այդ թեմայի շրջանակում գրողը չի շրջանցել նաև տարալից հայի՝ «օտարականի ցավը»:

3. Կարապենցի դեգերող հերոսներին բնորոշ է նաև ներքին դեգերումը՝ որպես կեցության իմաստի որոնում, ինչ-որ իմաստով նաև նրա արտաքին դեգերումները այդ ներքին որոնումների արտապատկերումն են հենց: Այսպիսով, մարդը Կարապենցի պատմվածքներում անցորդ է և ապրում է կյանքը «անցորդի պես, անցողակի ու անճիգ, այնպես, ինչպես հատուկ է արհավիրքների բովից անցած մարդկանց» և իբրև *անցորդ* ի գորու չէ ըմբռնել շրջապատող աշխարհը, մարդկային անցուդարձն ու երթևեկը, կյանքի խելահեղ վազքը, որ խենթորեն սլանում է դեպի մահ: Պատմվածքներից շատերին բնորոշ է կամերայնությունը, կենցաղային դրվագների ու մանրամասների բացակայությունը, իսկ կերպարները հատկանշվում են դասական կերպարներին բնորոշ խառնվածքի (այդ թվում և ազգային) կամ բնավորության բացակայությամբ: Նրանց կերպարում ավելի շատ ընդգծված է մենության, տազնապի, ժամանակակից մարդկությանը հուզող խնդիրների, արդի քաղաքակրթության մարտահրավերների վերապրումն ու խորհրդածությունը, քան խառնվածքը, բացառությամբ թերևս «Նոր աշխարհի հին սերմնացանները» շարքի պատմվածքների:

4. Եթե այլ պատմվածաշարերում Կարապենցի ազգությամբ հայ հերոսները, պահպանելու համար իրենց ազգային ինքնությունը, օտարվում են միջավայրից, իսկ երբեմն դիմում անձնասպանության, ապա «Նոր աշխարհի հին սերմնացանները»

շարքում հայն այնքան զորավոր է, որ կարողանում է ոչ միայն պահպանել ազգային ինքնությունը, այլև դրա շնորհիվ ձևափոխել ստար իրականությունը: Այլ պատմվածաշարերում ազգությամբ հայ հերոսների մտքում ընդգծված չէ հայի ազգային նկարագիրը, հայը ոչնչով չի տարբերվում օտարազգիներից. օտարության զգացումն ազգային նկարագիր չի ենթադրում, և դա է պատճառը, որ հայ հերոսներն իրենց ճանաչում են օտարազգիների մեջ: «Նոր աշխարհի հին սերմնացանները» վառ ու ինքնատիպ, իրենց ազգային պատկերացումներով առանձնացող, կոլորիտային կերպարներ են, և ազգային խառնվածքի շեշտված նկարագրով ազգային դյուցազնավեպի և Սարոյանի զարմանահրաշ, խենթ ու փոքրիշատե «ծուռ» հերոսներին են հիշեցնում: Ի տարբերություն այլ շարքերի պատմվածքների, որոնցում հայն անարմատ, իբրև կերպար ազգային նկարագրից զուրկ, թափառական, ճամփորդ է, այս պատմվածքներում ընդգծված ազգային խառնվածք ունի, արմատի հիշողություն, հաճախ նաև ազնվականի կեցվածք, բացի այդ, ի տարբերություն այլ շարքերի պատմվածքների մոայլության, հեղինակն այստեղ դիմում է գրոտեսկի, հումորով է վերաբերում իր հերոսներին, ինչպես էպոսում ժողովուրդն իր հերոսներին:

5. «Անձանոթ հոգիներ» շարքի պատմվածքներում ազգությամբ հայ հերոսներին բնորոշ է լքվածության ու հուսալքության զգացումը: Դրանք նաև գոյապաշտական գրականության առանցքային հասկացություններից են: Լքվածություն ասելով ֆրանսիացի էկզիստենցիալիստները հասկանում էին Աստծու բացակայությունը: Աստված գոյություն չունի, և մարդը հենարան չունի ոչ արտաքին աշխարհում, ոչ էլ իր ներսում: Իմա՝ հուսալքությունը մարդուց դուրս գտնվող և մարդկային կյանքը կամ գոյությունն իմաստավորող հենարանի բացակայությունն է, լինի Աստված, թե հայրենիք: Կարապենցի հերոսների մոտ այդ հենարանը հայրենիքն է, կյանքն իմաստագրուկ է նրանց համար առանց հայրենիքի: «Նոր աշխարհի հին սերմնացանները» պատմվածաշարի հերոսները կերտում են իրենց հայրենիքը հայրենիքից հեռու, ստեղծում են այդ ներքին հենարանն ու ապավենը և ավելի վստահ են զգում իրենց օտարության մեջ:

6. Կարապենցի պատմվածքների հերոսներին մտերմացնում է գոյության պատահականությունն ու մենության սուր զգացումը: Նրանք զգում են, որ իրենց հանդիպումը խիստ պատահական բնույթ է կրում, որ մարդկային գոյությունը պատահականությունից բացի ոչ մի ուրիշ ուժ իրականում չի «կարգավորում»: Եվ այս գիտակցության վերապրումը հուսալքությամբ է համակում մարդուն, իսկ այդ հուսալքությունից կարծես թե մի ելք կա միայն, մի փրկություն, որը երկու անձանոթների ստիպում է մերձենալ, առանց հոգեպես կապվելու, մեկը մյուսի հանդեպ հավակնության: Իսկ այդ մերձեցման մարմնական հաճույքի ետևում դարձյալ ոչինչն է: Այնպես, որ սեռական մերձեցումը փախուստն է ոչնչից: Կարապենցի հերոսները մենությունից փրկվում են պատահական սեռահարաբերության մեջ, և այդ մերձեցման ջերմությունից բացի մարդկային հոգին ջերմացնող ոչինչ գոյություն չունի:

7. Կարապենցն անդրադարձել է ոչ միայն 20-րդ դարի մարդու առջև կանգնած խնդիրների, այլև ավելի արդիական ու հրատապ տագնապների: Նա ահազանգում է ինքնառնչացման ու ինքնասպառման սահմանին կանգնած քաղաքակրթության կործանումը: Բնությունը ոչնչացնելով՝ մարդը քաղաքներ է կառուցել, ստեղծել քաղաքակրթություն, բայց կործանման է մատնում նաև քաղաքները: Գրողին հետաքրքրում է քաղաքից ու քաղաքակրթությունից փախուստի, մարդու և բնության ներդաշնակության թեման: Մեծ քաղաքում մարդը մենակ է և անկարող է վերագտնել հանրության հետ ներդաշնակության զգացումը, այնինչ բնության մեջ վերագտնում է իր ներդաշնակությունն ու ամբողջականությունը: Մշակույթի իմաստի կամ

անիմաստության թեմատիկայի տիրույթում հակադրություն են կազմում նյութական ու հոգևոր մշակույթները: Գիտության և տեխնիկայի աննախադեպ զարգացումը, մեքենայացման անկասելի ընթացքը, պատերազմները տեխնոլոգիական դարաշրջանում աննակետելիորեն փոխել են իրականության ընկալման և մարդկային փոխհարաբերությունների բնույթը: Մարդու մեջ մահանում է մարդը, սպառվում է մարդկայինը և ամենամարդկայինը՝ իր տեսակին ապրումակցելու հատկությունը, և քանի որ ժամանակակից մարդու կյանքը այնքան գերհագեցած է արտաքին աշխարհից իր ներաշխարհի վրա գրոհող տեղեկատվությամբ ու տպավորությունների հոսքով, ապա նա չի հասցնում նույնիսկ հետադարձ հայացքով իմաստավորել այն ամենը, ինչ տեսնում է ինքը, այսինքն, նույնիսկ, ինչ-որ իմաստով ընկալում էլ չկա, մարդու առջևով անցնում են իրադարձություններ, որոնք նա այդպես էլ չի հասցնում ընկալել:

Ատենախոսության թեմայով հրատարակած հոդվածների ցուցակ

1. «Հայապահպանության խնդիրները Հ.Կարապենցի պատմվածքներում. «Նոր աշխարհի հին սերմնացանները ժողովածուն», «Գարուն» ամսագիր, N 9- 12, Երևան, 2012, էջ 46-53:
2. «Համամարդկային տազնապը Հ. Կարապենցի պատմվածքներում», ՀՊՄՀ, Հայագիտական հանդես, N 1-2 (21-22), Երևան, 2013, էջ 88-97:
3. «Մենության, կարոտի ու սիրո հոգեբանական վիճակների պատկերումը Հ. Կարապենցի պատմվածքներում», ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրակ. ինստիտուտ, Երիտ գիտն. հանրապ. գիտաժողովի նյութեր, Երևան, 2013, էջ 158-168:
4. «Հակոբ Կարապենցի «Նոր աշխարհի հին սերմնացանները» պատմվածաշարը որպես գեղարվեստական տարեգրություն», Հայագիտական հանդես 2(40) - ՀՊՄՀ Երևան, 2018, էջ 66-72:
5. «Օտարականի կերպարը Հակոբ Կարապենցի պատմվածքներում», Գրականագիտական հանդես ԺԸ, ՀՀ ԳԱԱ, Երևան, 2019, էջ 32-39:
6. «Կարապենցը և համաշխարհային գրական ազդեցությունները», Հայագիտական հանդես, 1(43) -ՀՊՄՀ, Երևան 2019, էջ 63-69:
7. «Ամերիկյան իրականության պատկերը Կարապենցի պատմվածքներում», Գրականագիտական հանդես, ԻԱ, ՀՀ ԳԱԱ, Երևան, 2020, էջ 105-115:

Заклучение

Саакян Гоар Кареновна

Малая проза Карапенца

(Литературные отношения и взаимодействия)

Афтореферат диссертации на соискание ученой степени кандидата

Филологических наук по специальности 10.01.02- Армянская литература новейшего периода.

Защита диссертации **состоится 7 мая 2021 года в 12:30** часов на заседании специализированного совета 003 по специальности «Литературоведение» при Институте литературы имени М. Абегяна АН РА по адресу: ул. Григора Лусаворича, 15, г. Ереван.

Наша диссертация посвящена малой прозе, в частности рассказам одного из великих американских писателей армянского происхождения Акоба Карапенца. В Предисловии мы представили писателя как мастера малой прозы, определяя тематический охват ряда его рассказов и рамки литературного влияния, провели общий теоретический обзор проблеме литературного влияния, разделяя повлиявших на писателя авторов армянской, американской и всемирной литературы на две группы – авторы, которые оказали на писателя идеологическое влияние, и авторы, у которых писатель заимствовал технику художественной прозы, стилистические приемы и мастерство.

В Первой главе мы представили философские положения и литературные мотивы основанного в конце 19-го века и распространённого философской и художественной литературе экзистенциального течения, провели обзор эссе Карапенца об экзистенциализме. Анализируя рассказы автора в контексте экзистенциализма мы провели параллели с теми писателями, влияние которых на свое творчество отмечает сам Карапенц. Сопряженное присутствие многих тем и мотивов роднит его не только с экзистенциалистами, но с теми авторами армянского происхождения, которые в той или иной мере примыкают к этому течению. В данной главе, анализируя ряд «Незнакомые души», мы предопределили одну из важных качеств американского, а далее и экзистенциализма Карапенца – сочетание национальной тематики изгнания и мотивов всечеловеческого экзистенциализма.

Вторая глава диссертации посвящена ряду рассказов писателя “Старые сеятели нового мира”. Герои этого ряда также являются эмигрантами, но они не одиноки, как герои “Незнакомых душ”, а имеют общину и свято верят идее армянства и нации. А ряд рассказов Карапенц называет “ода тем, которые отвергли смерть и поражение, и тем, которые обняли чужую землю, сохраняя в сердце мечту о возвращении”²⁰. Называя своих героев сеятелями, писатель подчеркивает жизнеутверждающий характер их деятельности на чужбине. Если многие герои ряда рассказов “Незнакомые души” не находят на чужбине основы существования и выбирают путь добровольной смерти и самоуничтожения, то старые сеятели укоренились “в новом мире”, крепко держаться за знь, с храбростью создания продолжения “духовной родины” на чужой земле. В данной Главе мы исследовали также жанровые проблемы ряда рассказов, сравнивая его с подобными рядами всемирной литературы и доказывая, что он более примыкает к

²⁰ Карапенц А., Старые сеятели Нового мира, Вашингтон, 1975, стр. 6. Впредь цитаты, сделанные из данной книги, будут отмечены в скобках.

схожему с романами виду ряда рассказов с неповторимыми образами, общей атмосферой, колоритом и топосом.

В Третьей главе мы анализировали один из лучших и более глубокий с точки зрения обобщения тем и проблем всечеловеческого значения ряд рассказов Карапенца - "Антракт". В данном ряде также присутствуют экзистенциальные мотивы, но уже не в национальном, а в более общем – всечеловеческом контексте. Герои находятся в поисках – отказываясь от цивилизации, они блуждают в подступах собственной души, стараясь приблизиться к своей сущности и природе (что одно и то же), от которой они давным-давно отчуждились. Человек построил города, новую вавилонскую башню цивилизации, создал машины и стал пленником машинной жизни, отдаляясь от своей сущности, приобрел поддельные представления и исказили веру. Беспрецедентное развитие науки и техники, неотвратимый процесс машинизации, войны в технологическом веке незаметно изменили характер восприятия реальности и человеческих взаимоотношений. Причиной данного кризиса Карапенц видит в отсутствии философской основы: современной цивилизации, уверен писатель, не хватает та философская опора, без которой пошатываются моральные критерии, становится бессмысленным искусство, искажаются религиозные понятия. Выход изданной ситуации Карапенц видит в самопознании и возвращении человека к природе и сущности.

В этой главе диссертации мы исследовали сборник Карапенца «Американский хоровод». Продолжая развитие в предыдущих рядах экзистенциальные темы и мотивы, в частности тему отчуждения и одиночества, данным сборником писатель приводит новшество. Прежде всего тему человеческого отчуждения и одиночества в работах данного ряда он отражает изображением драматических ситуаций, тем самым его экзистенциализм напоминает прозу одного из мастеров американских рассказов Реймонда Картера. Рассказы «Американского хоровода», действительно, являются насущными, свободные от литературной условности предыдущих рядов. В эссе под именем «Писатель и его путь» Карапенц говоря об этом ряде, отмечает: «Была идея показать существенное напряжение в повседневных явлениях». В данном ряде он уже представляется не как «философ», а как психолог, он не пытается проникнуть во внутренний мир героя, как в предыдущих рядах и отыскать чувство человеческого одиночества и отчуждения, или философствовать о сложных экзистенциальных проблемах. Иными словами, в работах данного ряда субъективный нарратив заменяется объективным способом. Этот ряд Карапенца, пожалуй, является самым американским. Здесь он «не только выбрал героев американцев, но и дух и стиль многих рассказов – полностью американский. То есть, писатель мог бы считаться типичным представителем новой американской литературы, если бы он писал на английском»²¹.

²¹Гарун, 1998, н.10, стр. 75

CONCLUSION

Gohar Karen Sahakyan
Hakob Karapents's short prose
(Literary relations and interakctions)
The Dissertation for the scientific degree of candidate of philological
Sciences,
Speciality of 10.01.02 " Armenian Literature of Modern Period"

The defense will be held on **May, 7, 2021, at 12:30 o'clock at** the meeting of the Specialized Council of Literary Studies 003, at the institute of Literature after M. Abeghyan, NAS Ra.

Address: Grigor Lusavorich 15, Yerevan

The dissertation is dedicated to the novella, particularly the stories of one of the most prominent American-Armenian writers of the 20th century – Hakob Karapents. In the introduction we have presented the writer as a master of novella identifying the scopes of the thematic inclusions and literary influences of his short prosés. We have also made a general theoretical reference to the literary influence dividing the authors of Armenian, American and global literature who had influenced Hakob Karapents into two groups: writers who ideologically influenced Karapents and writers from which he learned the techniques, stylistic devices and mastery of the prose. In the first chapter we have presented the philosophical clauses and literary motives of the existentialism that were widely spread in the philosophy and fiction that started at the end of the 1st century and continued in the 29th century, we have reflected on the essays written by Karapents about the existentialism. While analyzing the writer's short stories in the context of existentialism we have drawn parallels with those authors whose influence on his own prosés were mentioned by Karapents himself. The existence of the many combined themes and motives makes the writer not only dear to the existentialists but also to those Armenian authors who were more or less adhered to that worldview. In this chapter we have outlined one of the most important features of the existentialism – the combination of the national theme of deportation and universal motives of the existentialism by analyzing the "Unknown Souls" series.

The second chapter of the dissertation is dedicated to the writer's short stories called "The Old Sowers of the New World". The protagonists of the collection are again deportees, but they are not the lonely deportees of the "Unknown Souls", but a community of Armenians who are devoted to Armenians and to the concept of "nation". Karapents called the series as the following: "Dedication to those who rejected the death and defeat and to those who embraced the foreign land in their hearts dreaming to return"²². By calling his protagonists as sowers he emphasizes the vital nature of their activities in the foreign land. If many of the heroes in the "Unknown Souls" series couldn't find any basis for their existence and couldn't find out any solution than voluntary death and self-destruction, the "old sowers" deepened their roots in the "new world" firmly grasped the life to build "spiritual homeland" in the foreign land and to survive courageously. In this

²²Karapents Hakob, "The old Sowers of the New World", Washington, 1975, p6. Hereafter the pages of the quotes from the same source will be in parentheses.

chapter we have also referred to the genre problems of the prose collections proving that it is more closely related to the novel genre of the prose with its repetitive characters, general context, literary color and topos by comparing it with the similar examples and series found in the world literature.

In the third chapter of the dissertation we have analyzed the “Intermezzo” short story collection that is one of the best works written by Karapents and has a deeper value from the perspective of themes of universal importance and generalized problems. In this collection there are existential motives that are not national but are more general and global. The protagonists are in the wanderings refusing civilization, they wander in the depth of their own souls trying to get closer to their own identity or nature from which they have been alienated for a long time. Man has built cities, new Babel towers of civilization, vehicles and has become a prisoner of the mechanical life leaving behind his own identity, getting false views and distorting the faith. The unprecedented development of the science and technology, the unstoppable process of mechanization, the wars in the technological era have unnoticeably changed the nature of reality perception and human relationships. Karapents thought the reason of this crisis was the absence of philosophical foundation: the writer is convinced that the modern civilization lacks the necessary philosophical framework without which the moral values are violated, the art loses its meaning, the religious concepts get distorted. Karapents found the solution in self-awareness and homecoming of the man to the nature where he can go back to his own identity and nature.

In this chapter of the dissertation we have examined the “American Circle Dance” collection written by Karapents. Continuing the existential themes and motives found in the previous collections, the themes of alienation and loneliness in particular, the writer brings innovation with this collection. First of all, in the stories of this collection he pictures the themes of human alienation and loneliness by means of dramatic solutions, where his existentialism reminds us about the short stories of Raymond Carver, one of the American masters of prose. The stories of the “American Circle Dance” are real and vital, free from any literal conventions typical to the previous collections. In his essay “The Writer and His Journey” Karapents talks about this collection: “The focus is to express the climax in everyday life”²³. In this collection he doesn’t reveal himself as a “philosopher” but as a psychologist, he doesn’t try to penetrate into the inner world of the character and study the feeling of the human alienation and loneliness or make philosophical statements on the tough questions of existentialism as he did in his previous collections, in other words the subjective narrative is replaced by the objective way of narration in the stories of this collection. This collection is probably the most American collection among the works written by Karapents. Here he “not only chose American protagonists but also the spirit and the style of those stories are totally American. This means that this writer could be considered to be a typical representative of the American new fiction, if he composed in English”²⁴.



²³Same place, p 77.

²⁴Garoun, 1998, N10, p 75.